Սայաթ Նովա

Էսօր իմ յարին տեսա

Էսպես լավ մուխամմազ, Արութինի ասած:

Էսօր իմ յարի՛ն տեսա բաղչի մեջը ման գալով,
Գեդի՝նը զարթարվեցավ իմ յարի օսկե նալով.
Բըլբուլի պես պտուտ էկա վարթի վրա, ձեն տալով.
Ջունուն էլավ խիլքըս գըլխես, սիրտս տխուր, աճկս լալով.
Հուս ունիմ իմ ստեղծողեմեն՝ մեր դուշմանն ըլի էս հալով:

Յա՛ր, էտ քու նազ ու դամզով ջանս փել ու փանդ իս արի,
Խմիլ ես էշխով շարբաթը, պռոշնիրըդ խանդ իս արի.
Խաթ ու խալով, քաղցր լիզվով շատ ինձ պեսին բանդ իս արի.
Տո՛ւր դանակը, ինձի սպանե, մի՛ ասի՝ րիշխանդ իս արի.
Ջունքի մահս յարեմեն Է, թո՝ւղ լի մեռնիմ լավ գոզալով:

Տարին-տասներկու ամիս մազիրըդ հուսած կուլի.
Պռոշեմեդ միղր Է կաթում, թողնիս՝ յախեդ թաց կուլի,
Գարնան շը՝նչի նըման՝ կարմիր վարթի հիդ բաց կուլի.
Ի՛նչ օքուդ է քու բաղմնչուն՛ դարիբ բլբուլը լաց կուլի.
Մուրվաթ չունի՞ս, պտուտ գու քա բաղչի վրա ճըկճըկալով:

Յիփ քու սուրաթը կու քաշին՝ նաղշումը շընուք կու տաս.
Կու վառվռաս ճրաքի պես՝ սաղչումը շընուք կու տաս.
Մըշկով լիքը բըրոլի պես՝ թաղչումը շընուք կու տաս.

Բաց կուլիս կարմիր վարթի պես՝ բաղչումը շընուք կու տաս,
Քամին դիբչի փոթլիդ մեչը՝ հուտրդ գու քա վրռվռալով:

Յիս է՛լ ուրիշ յար չունիմ, է՛ս գլխեն վաղ իմացի,
Անգաճ ա՛րա, մա՛տաղ իմ քիզ, է՛ս խոսկս սաղ իմացի.
Մտիկ ա՛րա քու ստիղծողին, տուզ-նամազ-աղ իմացի.
Սալաթ Նովին մի՛ ջգրեցնի՛ էշխեմեդ տուսաղ իմացի.
Խիլքս գլխեմես տարիլ իս քու, բեմո՝ւրվաթ, զարդիշ տալով: